Պարոն/Տիկին Ա. Ղևոնդյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ ի գիտություն

Ա. Սաֆարյան ________ 19.11.24թ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակիցների անունները, ազգանունները՝**

- Լուսինե Հովհաննիսյան,
- Սամվել Պետրոսյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող սակագնային քաղաքականության վարչության էլեկտրաէներգետիկական շուկայի բաժնի պետ,
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝ Վարշավա** (Լեհաստան), 2024 թվականի նոյեմբերի 11-12-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** ԵՄ-ն հանուն էներգետիկայի (EU4Energy) նախաձեռնության տարածաշրջանային գրասենյակ:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» ծրագրի շրջանակում «REMIT-ի իրականացում» թեմայով կայանալիք երկօրյա տարածաշրջանային դասընթացին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները (հարցերը)՝** Դասընթացի բացման խոսքով հանդես եկան և դասընթացի մասնակիցներին ողջունեցին Էներգետիկ համայնքի քարտուղարության և Էներգետիկ կարգավորողների եվրոպական խորհրդի ներկայացուցիչները՝ ներկայացնելով նաև դասընթացի

ընթացքում նախատեսված քննարկվող թեմաները՝ Արևելյան գործընկերության երկրներում REMIT-ի իրականացման տեսանկյունից:

7. Հանդիպումները, ելույթները՝

Դասընթացի առաջին օրն Էներգետիկ համայնքի քարտուղարության ներկայացուցչի կողմից ներկայացվեց REMIT-ի իրավական շրջանակը՝ առավել մանրամասն կենտրոնանալով ECRB-ի և ազգային կարգավորողների (NRA) պարտականությունների վրա: Այնուհետև Էներգետիկ կարգավորողների եվրոպական խորհրդից Անեգրետ Գրոեբելը ներկայացրեց նոր՝ «EU REMIT-2» փաստաթղթով նախատեսված իրավական նորմերն ու դրանց իրագործելությանն առնչվող կարգավորումները: Քննարկվեցին «EU REMIT-2» փաստաթղթով նախատեսված իրավահարաբերությունների՝ «FUL REMIT»-ին մոտարկման ընթացակարգը, «EnC REMIT» և «EU REMIT» փաստաթղթի միջև առկա բացերը, դրանց հետագա ներդրմանն ու կիրարկմանն ուղղված քայլերը, ինչպես նաև այդ ուղղությամբ ազգային կարգավորողների հիմնական անելիքները:

Հաջորդիվ, Ավստրիական E-Control-ի, ACER-ի և Ալբանիայի կարգավորող մարմնի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին ԵՄ-ի և ազգային կարգավորողների կողմից REMIT-ի կիրարկման վերաբերյալ կարգավորման լավագույն փորձը, շուկաների մոնիթորինգի մեթոդները, տվյալների ներկայացմանը և դրանց պաշտպանությանը, ինչպես նաև կիբեռանվտանգությանն ուղղված կանոնները, ազգային կարգավորողների և ACER-ի միջև համագործակցությունը միջպետական առևտրին առնչվող դեպքերում, ինչպես նաև տուգանքների ռեժիմները:

Ավստրիական E-Control-ը հանդիսանում է ազգային կարգավորող, որը պատասխանատու է նաև շուկայի օպերատորի նշանակման, նշանակման չափանիշներին համապատասխանության մոնիթորինգի համար: Կարգավորողի համար փորձություն է հանդիսանում արդյունավետ կարգավորումների մշակումը օպերատորի նշանակման պրոցեսում, գործարքներում պրոֆեսիոնալ ներգրավված անձանց (persons proffecionally arranged in transaction) աուդիտը, կարգավորողի կողմից մարդկային ռեսուրսի ներգրավումը:

Շեշտվեց էլեկտրաէներգետիկական շուկաների ազատականացմանը համընթաց տվյալ շուկաների օպերատորների ազդեցության աճը, կարևորվեց նաև նրանց շուկաների վերաբերյալ պատմական տվյալների առկայությունը, ինչը շուկան ավելի կանխատեսելի է դարձնում: Ներկայացվեցին տվյալ շուկայի օպերատորներին ներկայացվող պահանջները՝ ԵՄ 2015/1222 կարգավորման համաձայն:

Այնուհետև, մի շարք երկրների, ինչպես նաև Հայաստանի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին տվյալ երկրի շուկայում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները: Հանդիպման ընթացքում տեղի են ունեցել ծավալուն քննարկումներ ներկայացված թեմաների վերաբերյալ՝ հարց ու պատասխանի ձևաչափով:

Դասընթացի երկրորդ օրը զեկույցով հանդես եկան դասընթացին մասնակցող Արևելյան գործընկերության երկրների ներկայացուցիչները: Զեկույցով հանդես ենք եկել նաև մենք՝ ներկայացնելով Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ներկայիս իրավիճակը, էլեկտրաէներգետիկական շուկայի մրցակցային մոդելին աստիճանական անցման պայմաններում 2022 թվականի փետրվարի 1-ից հանձնաժողովի կողմից իրականացված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մշտադիտարկման արդյունքների, հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթների և դրանց արդյունքում ընդունված որոշումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Ուշագրավ էին Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի կարգավորողների ներկայացուցիչների ելույթները.

Վրաստան. Էներգետիկ համայնքի և EU4ENERGY ծրագրերի կողմից տեխնիկական աջակցություն է իրականացվում Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի փաթեթի՝ ազգային օրենսդրությունում մոտարկելուն և ներառելուն: Օր-առաջ շուկան գործարկվել է 2024 թվականի հուլիս 1-ից:

Մոլդովա. Օրենքի նախագիծ է մշակվում REMIT-ի ազգային օրենսդրության մեջ ներառելու, շուկայի օպերատորի նշանակման և արտակարգ իրավիճակների վերաբերյալ օրենսդրություն ներդնելու համար:

Ուկրաինա. REMIT կիրառման նպատակով կարգավորողի կողմից ընդունվել են բոլոր ենթաօրենսդրական ակտերը: Հաշվի առնելով գների մեծ տատանումը՝ կարգավորողի մեթոդիկայի համաձայն բարձրացվել են առաստաղային գները (price cup): Երկրի կողմից փորձ է արվում ներդնել էներգիայի ծագման աղբյուրի ինստիտուտը, որով պայմանավորված իրականացվելու է կանաչ սերտիֆիկատի առևտուր:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Այցի ընթացքում հանդիպում և քննարկումներ ունեցանք Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդի (CEER), Էներգետիկ համայնքի քարտուղարության և դասընթացին մասնակից այլ երկրների ներկայացուցիչների հետ, հնչեցին հարցեր և տրվեցին դրանց պատասխանները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները -

Առաջարկվում է ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի №48-Լ որոշմամբ հավանություն տրված՝ ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցով նախատեսված «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքների նախագծերի մշակման ժամանակ քննարկել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին REMIT-ի կարգավորումներով նախատեսված առանձնահատուկ մոնիթորինգի, հետազոտության և պատասխանատվության միջոցի կիրառման իրավասություններով օժտելու նպատակահարմարությունը, ինչը հնարավորություն կտա կանխել կամ անհրաժեշտության դեպքում առավել խիստ արձագանքել մեծածախ շուկայի մասնակիցների շուկայում չարաշահումների (ներքին առևտրի և շուկայի մանիպուլյացիայի) վարքագծին:

Գործուղվող ---------- 18.11.2024թ. ---------- ***Լ. Հովհաննիսյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 18.11.2024թ ---------- ***Ս. Պետրոսյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 1098-ԳՔ, 16.10.2024թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ՝ **Սամվել Պետրոսյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության էլեկտրաէներգետիկական շուկայի բաժնի պետ՝ **Լուսինե Հովհաննիսյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Վարշավա /Լեհաստան/**

5. Գործուղման ժամկետները **10.11.2024-13.11.2024թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սամվել Պետրոսյան	Լուսինե Հովհաննիսյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	82	82	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	31,773	31,773	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	127,090	127,090	254.180
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		127.090	127.090	254.180

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 15.11.2024թ.